ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ
համայնք, Կոտայքի մարզ, գյուղ Քասախ, Հեռ. 0224 6-33-95, 093
08-07-06, , kasakh-village@mail.ru

N 441
28 դեկտեմբեր 2013թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ եմ ուղարկում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ գյուղական համայնքի ավագանու 2013թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 12 արտահերթ (չկայացած) նիստի արձանագրությունները:

Առդիր՝ 3 էջ:

Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Մկրտչյան

ՔԱՍԱԽ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Արձանագրություն N 12

28.դեկտեմբերի 2013թվ.

Գ. Քասախ

Ժ 11 ^{00} –ին կայանալիք ՀՀ Կոտայքի մարզի Քասախ գյուղական համայնքի ավագանու 2013թվ. դեկտեմբերի 28 –ի արտահերթ 12-րդ նիստը սկսվեց ժամը 11^{00}-ին՝ այդ պահին նիստին ներկա էին ավագանու հինգ անդամներ և մինչև 11^{30} նիստին անհարգելի պատճառով չներկայացան ավագանու հետևյալ վեց անդամները՝ Էդգար Մկրտչյանը, Գագիկ Թովմասյանը, Տարոն Թովմասյանը, Միքայել Սահակյանը, Նորիկ Հարությունյանը, Արմեն Թովմասյանը:

Այսպիսով՝ քվորումը չապահովելու պատճառով, նիստը չկայացավ:

Արձանագրում ենք նաև, որ ավագանու բոլոր անդամները օրենքով սահմանված կարգով և հավուր պատշաճի տեղեկացված են եղել 2013թվ. դեկտեմբերի 28–ի 12-րդ արտահերթ նիստի կայացման օրվա, ժամի, օրակարգի և ավագանու որոշումների նախագծերի վերաբերյալ:

Ավագանու ներկա անդամներ՝ Հ. Ղազարյան

Գ. Մկրտչյան

Ս. Հովհաննիսյան

Ղ. Վարդանյան

Ս. Խաչատրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Մկրտչյան

ՔԱՍԱԽ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ

28. դեկտեմբերի 2013թվ.

Գ. Քասախ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արմեն Նվերի Թովմասյանը 2012թվականի դեկտեմբերի 28-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 28-ը ընկած ժամանակահատվածում Քասախ գյուղական համայնքի ավագանու 12 նիստերից 8-ին անհարգելի պատճառներով բացակայել է, ինչպես նաև իրեն հավուր պատշաճի տեղյակ պահելուց հետո չի ներկայացրել որևէ հարգելի պատճառ՝ իր բացակայությունների համար, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասից, ըստ որի համայքի ավագանու նիստը իրավազոր է, եթե նիստին ներկա են ավագանու անդամների օրենքով սահմանված թվի կեսից ավելին, ինչպես նաև այն փաստից, որ շուրջ երեք ամիս է ավագանու թվով 3 նիստ չի կայանում՝ ավագանու օրենքով սահմանված թվի կեսից ավելի անդամների անհիմն չներկայանալու պատճառով՝ ավագանու 2013թվականի դեկտեմբերի 28-ի N12 արտահերթ նիստը իրավազոր չէ, ուստի նիստը գումարելը անհնարին է:

Հիմք ընդունելով վերոնշյալը, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Քասախ գյուղական համայնքի ավագանու 2013թվականի դեկտեմբերի 28-ի N12 արտահերթ նիստին ներկա ավագանու ներքո ստորագրյալ անդամներս

Արձանագրում ենք

Քասախ գյուղական համայնքի ավագանու անդամ Արմեն Նվերի Թովմասյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել:

Ավագանու ներկա անդամներ՝ Հ. Ղազարյան

Գ. Մկրտչյան

Ս. Հովհաննիսյան

Ղ. Վարդանյան

Ս. Խաչատրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Մկրտչյան